րանն՝ յայլոց մատուցեալ յակնն[2]՝ զննեն հանել շիւղ: *89* Եւ այսպիսի կեղծեաւք[3] հնարեն կարծեցուցանել աշխարհի զանձինս արդարս. եւ այն ոչ երբէք ծածկի, այլ եւս առաւելեալ յաւելուածովք կուտեն անձանց բարկութիւն յաւուրն բարկութեան. եւ չլսեն զՊաւղոսի բողոքն, եթէ *Զանձինս դատէաք*[բ]: *90* Եւ այլք ագահութեան ախտիւ վարակեալք՝ արկանեն ընդ պարտեաւք զարդարս եւ զոչ արդարս, եւ կարացեալ եւեթ ըմբռնել զմամոնայն, յաղագս որոյ խուեենն՝ այնուհետեւ զամենեսեան արդարս անուանեն եւ անմեղս, եւ զմարգարէին Ամբակումայ ստունկանեն զաղաղակ, մանաւանդ թէ նովաւ զսուրբ Յոգւոյն, թէ *Վա՜յ որ պահէ զագահութիւն չար ի տան*[4] *հւրում*[գ]:

*91* [5]Դարձեալ ասէին, թէ «Գամ մի պիղծ ոք է եւ չարագործ՝ Ղազարայ վանք անդ են, եւ սիրէ զնոսա»: *92* Եւ զայնպիսի բանից զասացողաց զգործս ես ահա լռեմ, զի ոչ ինչ է ինձ հարկ ասել. բայց աւր ահագին եւ ա-

1 *Զ.* վատ գործովք

2 *ԲԳտ.* յակինն

3 *Զ.* կեղծաւք

բ Յռոմ. ԺԴ 22

4 *ՁԱտ.* ի չար տան

գ Ամբ. Բ 9

5 *Ղ. Փարպեցու Թղթում եւս խօսքի աղաւաղութիւն կայ, որ առաջ է եկել մայր ձեռագրի մէջ թղթերի տեղափոխութիւնից, որից այդ աղաւաղութիւնը անցել է Զ.ին, Վ.ին եւ ՏՏ.ին: ԲԳտ. մեծ մասամբ ուղղագրել են այս աղաւաղութիւնները՝ տեղափոխուած հատուածները իրե՛ նց բնական տեղերում զետեղելով: Այս դասաւորութեան համեմատ է եւ ներկայ տպագրում: Յամեմատութեան համար դնում ենք տեղափոխուած հատուածների դասաւորութիւնը՝ ըստ ՁԱտ.ի եւ ըստ Վ.ի:*

*ՁԱտ.* 1. Իսկ անձամբ զանձն յանդգնեցուցանել… ստունկանեն զաղաղակ մանաւանդ թէ նովաւ *(Թուղթ, 88-90)*

2. Եւ կամաւ եւս խորհիցիս զյիշելդ… եւ կամ թաղեա. մի գուցէ զգացեալ ուրուք *(Թուղթ, 121-132)*

3. զսուրբ Յոգւոյն, թէ վայ որ պահէ… …զպտղատրութիւն տեղւոյն հատուցանելով *(Թուղթ, 90-99)*

4. Զի տրտում եմ անմխիթար… մանաւանդ թէ ըստ ի քեզ հոգասիրութեանդ *(Թուղթ, 112-121)*

5. քանզի յոլով նորա արբանեկեալ էր… ընդ օձտելոյն եւեթ այսր անդր *(Թուղթ, 104-111)*

6. եւ ուրոյն զիմ պէտս եւ զկարօտութիւն… առ Անդլոյ է. նա առաւել գիտէ *(Թուղթ, 99-104)*

7. եւ զիս ընդ քեզ թաղիցէ *(Թուղթ, 132 մինչեւ վերջ)*

*Վ.* 1. Իսկ անձամբ զանձն յանդգնեցուցանել.... զի մեծ դատաստան ընդունիք *(Թուղթ, 88). այնուհետեւ չիք* Եւ ոչ դարձեալ իբրեւ զլցեալսն …կարէի ումեք հաճոյ *(Թուղթ, 88-102)*

2. Եւ կամաւ եւս խորհիցիս զյիշելդ.... եւ ի մարդոյ չարէ փրկեա զիս *(Թուղթ, 121-126). այնուհետեւ չիք* որոց հետամտեալ այնուհետեւ.... վա՜շ վա՜շ, տեսին աչք մեր *(Թուղթ, 126-129)*

3. Եւ զի ոչ լոկ բանից.... եւ կամ թաղեա՛ *(Թուղթ, 129-132)*

4. Արդ՝ դու տէր այր յերկարայուշ ես եւ անմոռաց, մանաւանդ թէ ըստ ի քեզ հոգասիրութեանդ *(Թուղթ, 121)*

5. քանզի յղելով (=յոլով) նորա արբանեկեալ էր.... եւ կամ զայլս լուսաւորիցեն *(Թուղթ, 104-107). այնուհետեւ չիք* Եւ դու տէր… ի քեզ հոգասիրութեանդ *(Թուղթ, 108-121)*

6. Բայց ես եւ այլ նոր իմն բանս… նա առաւել գիտէ (Թուղթ, 103-104) եւ զիս ընդ քեզ թողիցէ որ աներկիւղութեամբ քաջ հովւի է *(Թուղթ, 132-133)*

7. Եւ արդ իցէ՞ ոք ի ժամանակս *(Թուղթ, 154) մինչեւ վերջ՝ բաց թողնելով հատուածս*՝ Ո՞ւր հոգողութիւն արդար ուսուցչի… զժոխս ժառանգեցուցանէ *(Թուղթ, 133-153)*